Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

ISSN 1829-2224

90/4186/ 16 մայիսի 2012 չորեքշաբթի

Ա

## «Վաքշե» թող գան

Դիտորդների հարցում ընդդիմության դիրքորոշումը ինձ համար մինչեւ վերջ պարզ չէ: Ընտրություններից առաջ նրանք եւ մենք բոլորս, կարծես թե, ուզում էինք, որ ընտրությունների ժամանակ որքան հնարավոր է շատ արտասահմանցի դիտորդ գա՝ հնարավոր ընտրախախտումները կանխելու համար: Ընտրություններից հետո ընդդիմության ներկայացուցիչը հանրահավաքի ժամանակ խոսելով տարբեր երկրներից ժամանած դիտորդների մասին՝ բացականչում է՝ «թող վաքշե չգան»: Եկեք կողմնորոշվենք, թե ինչն է մեզ համար առավել կարեւոր՝ որ դիտորդները վերահսկե՞ն ընտրությունների օրինականությունը, թե՞ որ նրանք հետո գրեն ընդդիմությանը ձեռնտու եզրակացություն: Իմ տպավորությամբ՝ առաջինն ավելի իրատեսական է, քան երկրորդը, եւ հենց ընդդիմության վստահված անձինք են փաստում, որ արտասահմանցիների ներկայությունը տեղամասերում զսպող դեր է խաղում իշխանությունը ներկայացնող կեղծարարների համար: Իսկ շատ խիստ, դատապարտող, ընտրությունները անվավեր ճանաչող զեկույց ակնկալելն անիմաստ էր. մենք ունեցել ենք շատ ավելի վատ ընտրություններ, որոնց մասին դիտորդները գրել են շատ ավելի լավ տեքստեր: Նախորդ բոլոր ընտրություններում բռնությունների, կրակոցների, մի անգամ նույնիսկ՝ քվեարկության ժամկետը հընթացս երկարացնելու ֆոնի վրա այս վերջին՝ «խաղաղ կեղծարարության» արդյունքները չճանաչելը միջազգային հանրության կողմից կլիներ պարզապես անարդար:

«Վաքշե մի եկեք» կոչը, բոլոր դեպքերում, պետք է ընկալել որպես էմոցիոնալ պոռթկում: Ընդհակառակը՝ միջազգային կառույցների մասնակցությունը մեր ընտրություններին պետք է հնարավորինս ընդլայնել: Քանի որ Հայաստանի հիմնական քաղաքական ուժերը ներկայացված են 5-րդ գումարման ԱԺ-ում, նրանք շատ բաների մասին կարող են պայմանավորվել: Մասնավորապես, խոսքը կարող է լինել այն մասին, որ գալիք նախագահական ընտրությունները ոչ թե վերահսկվեն, այլ հենց կազմակերպվեն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից: Օրինակ՝ բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների նախագահը լինի հենց այդ կառույցից, իսկ հանձնաժողովների անդամները խորհրդարանում հավասար իրավունքներով ներկայացված 6 խորհրդարանական ուժերից: ԱԺ-ն կարող է նաեւ օրենքներ ընդունել ընտրություն կատարած քաղաքացիների ցուցակը հրապարակելու, ընտրացուցակները ստուգելու եւ մաքրելու մեխանիզմների մասին, ինչպես նաեւ՝ խստացնել պատիժները ընտրակաշառք վերցնելու եւ տալու համար՝ դասելով դա պետության դեմ հանցագործությունների շարքին:

Բայց ամենակարեւորը ընդունելն է, որ մենք առայժմ չենք կարող անցկացնել նորմալ ընտրություններ՝ Հայաստանում կան տասնյակ հազարավոր մարդիկ, ովքեր պատրաստ են ամեն գնով նպաստել իշխանության վերարտադրությանը, ինչպես նաեւ հարյուր հազարավոր մարդիկ, ովքեր, ըստ էության, անտարբեր են ընտրությունների ելքի նկատմամբ: Խոստովանել ընտրություններ անցկացնելու մեր անկարողությունը ամոթ բան չէ: Չէ՞ որ մենք չենք ներմուծում, օրինակ, երդվյալ ատենակալների ինստիտուտը: Ինչո՞ւ: Որովհետեւ Հայաստանում «ատենակալության թեկնածու» անձանց մեծ մասը երդվելու է Աստվածաշնչի վրա՝ լինել արդար, եւ հետո դրժելու է իր երդումը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Երկիր մեդիան» համաձայն չէ ՀՌԱՀ-ի հետ



ՀՌԱՀ-ը երեկ հաղորդագրություն էր տարածել, որ պատրաստվում է հանձնաժողովի առաջիկա նիստում քննարկել «Կենտրոն» եւ «Երկիր մեդիա» հեռուստաընկերություններին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը: ՀՌԱՀ-ը մայիսի 11-ին «Կենտրոն» հեռուստաընկերությանը տուգանեց 1 մլն դրամով, քանի որ, ըստ հանձնաժողովի՝ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում էր հեռարձակել: Aravot.am-ի հետ զրույցում երեկ «Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրատվական եւ քաղաքական հաղորդումների տնօրեն Գեղամ Մանուկյանը նշեց, որ չի ցանկանում որեւէ մեկնաբանություն տալ ՀՌԱՀ-ի այդ հայտարարության առնչությամբ, բայց նշեց. «Իհարկե, համաձայն չենք, բայց մենք մեր հիմնավորումները եւ ծանրակշիռ փաստարկները կներկայացնենք հանձնաժողովի նիստին: Դեռ որոշում չկա, քննարկվում է այդ հարցը, եւ կարող է ընդունվի, կարող է չընդունվի»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Ճշմարտություն եմ ծախում... սարքովի»

«Դրանք դիտորդ չեն, պատճենահանող են: Ժողովուրդն այսքան խոսում է՝ իրենք ոչ մի տեղ, ոչ մի խախտում չտեսա՞ն: Բա դատախազությո՞ւնը՝ մասսայական կաշառք էր բաժանվում, իրենք հատ ու կենտ դեպքեր գրանցեցին: Բայց եթե որեւիցե մեկն իր տանը նստած՝ սխալ է փռշտում, անմիջապես լսում են: Որ խոսում են ազատ, արդար ու նման բաների մասին, Պարույր Սեւակին եմ հիշում՝ «Ճշմարտություն եմ ծախում... սարքովի»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով մայիսի 6-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններին՝ ասաց ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը:

Կարդացեք էջ**D**3:

### «Տիկին, կնիքի բերանը բացեք»

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների օրը տեղամասերից մեկում մի զավեշտալի պատմություն է եղել: Առավոտյան արդեն, երբ մյուս տեղամասերում սկսվեցին ընտրողների անձնագրերից անհետացող թանաքի պատմությունները, մի տեղամասում էլ հանձնաժողովի նախագահը «հայտնաբերում» է, որ իրենց մոտ կնիքն ընդհանրապես հետք էլ չի թողնում: Այդ իրավիճակից շփոթված եւ իրեն կորցրած հանձնաժողովի նախագահն անմիջապես ահազանգում է ԿԸՀ: Այնտեղից հեռախոսով ցուցումներ են տալիս՝ կնիքը, թանաքը թափահարելու մասին եւ այլն, բայց միեւնույն է՝ ոչինչ չի ստացվում: Միջադեպն «արձանագրող» վստահված անձանցից մեկը շատ հանգիստ դիմում է իրեն կորցրած հանձնաժողովի նախագահին. «Տիկին, կնիքի բերանը բացեք»:

### «Պաշտոնական մեղադրանք չկա, որ խախտում է արվել»

ՀՀԿ պատգամավոր Մանվել Բադեյանը ոչ ՀԱԿ-ի, ոչ էլ «Ժառանգության» հետ ՀՀԿ-ի կոալիցիան չի պատկերացնում. «Գաղափարապես շա՛տ տարբեր ենք»,- ասում է պատգամավորը: Ինչ վերաբերում է միջազգային դիտորդների գնահատականներին, ըստ պարոն Բադեյանի՝ ոչ մի պաշտոնական մեղադրանք չկա, որ խախտում է արվել. «Ասում են, հենց ասում ես՝ ո՞վ է ասել՝ իզութոզները կորում են»:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ալաք» ակումբի հյուրն է ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20, Արցախ +9 +23

# Անահիտ Բախշյանն իրերն էր հավաքում

## Նա ափսոսում էր, որ շատ ծրագրեր եւ օրենսդրական նախաձեռնություններ կիսատ մնացին





Կիրակի օրը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքները: Երեկ «Առավոտն» Ազգային ժողովում էր, որտեղ հետընտրական անդորր էր: Միայն հատուկենտ պատգամավորների կարելի էր հանդիպել միջանցքներում կամ իրենց աշխատասենյակներում: Մենք փորձեցինք փոքրիկ դիտարկում անցկացնել՝ պարզելու համար, թե ընտրություններին այլեւ չմասնակցած եւ կամ դրանց արդյունքում համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով առաջադրված նախկին եւ արդեն չընտրված պատգամավորները շարունակո՞ւմ են արդյոք զբաղեցնել իրենց աշխատասենյակները, թե՞ սկսել են կամաց-կամաց հավաքել իրերը: Պատգամավորների, այդ թվում՝ նոր գումարման խորհրդարան չանցած նախկին պատգամավորների աշխատասենյակների դռները կողպած էին: Այդուհանդերձ, նկատեցինք, որ նրանցից մեկ-երկուսի աշխատասենյակի ցուցանակներն արդեն հանվել էին: Իր աշխատասենյակի վրայից հանված էր մասնավորապես ԱԺ նախկին նախագահ եւ ապա անկախ պատգամավոր Տիգրան Թորոսյանի անուն-ազգանունով ցուցանակը, Արա Աբրահամյանի եղբոր՝ Արմեն Աբրահամյանի ցուցանակը:

Խորհրդարանի իր աշխատասենյակում հանդիպեցինք «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր, նոր գումարման ԱԺ չանցած Անահիտ Բախշյանին. նա եկել էր իրերը հավաքելու եւ մի անկյունում կուտակել էր անցած 5 տարիների ընթացքում իր հեղինակած օրենսդրական նախաձեռնությունների թղթապանակները՝ նրանք, որոնք ընդունվել էին, որոնք ներառվել էին դեռ գործող խորհրդարանի նստաշրջանում կամ անգամ քառօրյա նիստերի օրակարգում, բայց այդպես էլ չքննարկվեցին: Մեր հանդիպման պահին նա իր համակարգչի վրա, ինչպես ինքը խոստովանեց, այդ պահին իր ապրումներն էր նոթագրում: Հարցրինք, թե ի՞նչ զգացողություններ ունի, ի՞նչ է ծրագրում ապագայի համար:

«Լավ տրամադրությամբ եկել էի իրերս հավաքելու եւ հավաքում եմ, նայում եմ՝ ո՞րը տանեմ, ո՞րը թողնեմ: Ձեռքս չի գնում թափեմ, բայց ի՞նչ անեմ այսքանը. 12 թղթապանակ այստեղ է, դեռ պահարանում էլ կան: Ամեն մի թղթապանակի բովանդակության վրա աշխատել ու հոգի եմ դրել՝ հատկապես կրթության, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող խնդիրներում:

Շատ եմ ցավում, որ հանրակրթության մասին օրենքի փոփոխությունների օրինագիծը, որի վրա 2 տարի աշխատել եմ հանրակրթության ոլորտի ջատագովների թիմի հետ, որով ներառական կրթությունը Հայաստանում պետք է հայտարարվեր, եւ այդ օրինագծի հեղինակն է կառավարությունն ու Անահիտ Բախշյանը, բայց հիմա չգիտեմ, թե ով պետք է խորհրդարանում պաշտպանի այդ նախագիծը: Այն ներառված էր վերջին քառօրյայի օրակարգում»,- ասաց տիկին Բախշյանը: Մեր դիտարկմանը, թե՝ իր կարծիքով «Ժառանգության» համամասնական ցուցակով խորհրդարան անցած իր գործընկերներից ո՞վ կարող է համալրել գիտության, կրթության եւ մշակույթի հանձնաժողովն ու պաշտպանել եւ առաջ տանել իր այդ եւ այլ օրենսդրական նախաձեռնությունները, Բախշյանն այսպես արձագանքեց. «Մեր խմբակցության մեջ որեւէ մեկն այդ պրոֆեսիոնալիզմը չունի, իսկ մյուս խմբակցություններից չգիտեմ, թե ով է լինելու կրթության ոլորտի այն գիտակը, որն այդ օրենքը կպաշտպանի՝ հենց այն տրամաբանությամբ, որը դրված է այդ օրինագծի հիմքում: Շատ կուզեի, որ այդ շատ կարեւոր եւ համարձակ օրենքն ընդունվեր, եւ որեւէ շեղում, որեւէ զիջում չարվեր:

Հիմա շատ եմ ցավում, որ այս մի գործը կիսատ եմ թողնում եւ ուրախ կլինեմ, եթե որեւէ խմբակցության մեջ լինի մեկը, ով այս օրինագծով առաջարկվող փոփոխությունների գիծը ճիշտ կտանի, չի կոի եւ չի հարմարեցնի իշխանություններին: Սա շատ կարեւոր է»: Տիկին Բախշյանին հարցրինք՝ մնացած թղթապանակներն ի՞նչ է անելու: «Տանելու եմ ավտոտնակի դարակներում պահեմ, ի՞նչ անեմ: Դրանց ծավալն այնքան մեծ է, որ տանը այդքան տեղ չունեմ: Անշուշտ, ես շարունակելու եմ կրթության ոլորտով զբաղվել»,- ասաց «Ժառանգության» ներկայացուցիչը՝ մեր հարցադրմանն ի հավելումն ասելով, թե առայժմ իրեն նոր աշխատանքի առաջարկներ չեն եղել. «Ոչ, ոչ մի առաջարկ չի եղել: Իշխանությունը հո ինձ պաշտոն չի՞ առաջարկելու: Ցավոք, այսօր մարդու գործունեության գնահատականը քաղաքական է, ոչ թե մասնագիտական: Իսկ այս պահին կրթության ոլորտի քաղաքականության համար պատասխանատուն ՀՀԿ-ն է: Իսկ համագործակցություն ՀՀԿ-ի հետ ես չեմ պատկերացնում»:

Բախշյանն ասաց, թե դպրոց էլ վերադառնալ չի կարող, որովհետեւ եթե գնար, ապա միայն որպես տնօրեն, բայց շուտով 65 տարեկան կդառնա, եւ դպրոցի տնօրեն, ըստ օրենքի, այլեւս չի կարող լինել: «Ամեն դեպքում շատ ծրագրեր կիսատ մնացին: Գլխիս մեջ այնքան նախագծեր կային»,- ասաց Բախշյանը:

Հարցրինք նաեւ, թե, իր կարծիքով, «Ժառանգության» կողմից ընտրողի ընտրությանը ներկայացված համամասնական ցուցակը ռացիոնա՞լ կամ ճի՞շտ էր ընտրված: «Եթե հիմա ասեմ, որ ճիշտ չէր՝ կստացվի, որ անձնական խնդիր եմ բարձրացնում: Բայց եթե անձնականը դնենք մի կողմ, ես շատ ափսոսում եմ, որ իմ գործընկերները խորհրդարանում չեն լինելու: Եկեք այդ մասին չխոսենք. մեր նոր խմբակցությունը կգա եւ կաշխատի: Այնպես, ինչպես 5 տարի առաջ մեր հասարակությունը մեզ չէր ճանաչում որպես պատգամավորների, բայց հետո սկսեց ճանաչել, գուցե մեր գործընկերներն էլ հաջորդ 5 տարիներին ավելի հետաքրքիր քայլեր կանեն, նոր որակ կբերեն «Ժառանգությանն» ու Ազգային ժողովին: Կապրենք՝ կտեսնենք»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է ձեզ հերթական հանրային բանավեճին, որին մասնակցելու հրավիրվել են մայիսի 6-ին կայացած ընտրությունների արդյունքում նոր՝ հինգերորդ գումարման խորհրդարան անցած քաղաքական ուժերի ներկայացուցիչները:

Ինչպե՞ս կօգտագործեն իրենց մանդատները խորհրդարան անցած վեց քաղաքական ուժերը: Կձեւավորվե՞ն, արդյոք, կոալիցիաներ: Եթե այո՝ ի՞նչ ձեւաչափով եւ ի՞նչ հիմքով: Խորհրդարանական ուժերի ինչպիսի՞ հարաբերակցությունը կլիներ լավագույնը երկրի եւ հասարակության համար:

Բանավեճը տեղի կունենա այս չորեքշաբթի՝

մայիսի 16-ին, ժամը 14:00-ին,

«Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում:

Բանավեճը կվարի

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

Նախորդ բանավեճերի տեսագրությունները կարող եք գտնել CivilNet am կայքում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119

# «Պետք է բարձրացնել Լեւոն Տեր-Պետրոսյանին ՀԱԿ-ից հեռացնելու հարցը»

## Ասում է ՀԱԿ անդամ Ռուբեն Թորոսյանը

ՀԱԿ անդամ, «Մարդու իրավունքներ-96» կուսակցության նախագահ Ռուբեն Թորոսյանը տարածել է «Անսկզբունքային գործիչների եւ ապօրինի ընտրության մասին» հայտարարություն: Այստեղ նա նշում է, որ չնայած 2012-ի խորհրդարանական ընտրությունները դեռ չեն ավարտվել, քանի որ առջեւում ՍԴ քննարկումներն են, սակայն որոշ «անսկզբունքային գործիչներ արդեն որոշել են, որ ընտրությունն ավարտվել է... մեկը՝ պատգամավորական իր մանդատը ուրիշին է փոխանցում, մյուսը կոալիցիա է ձեւավորում, երրորդները գնահատական են տալիս «ավարտված» ընտրությանը, ԱԺ խմբակցություններ ու կառավարություն են ձեւավորում, արդեն հաղթական քեֆեր են անում...»: Հիշատակելով բազում ընտրախախտումներն ու ապօրինությունները՝ պարոն Թորոսյանը նկատում է. «Ապօրինի ընտրության օրինականացման այդ դավաճանական գործընթացը սկսեց ՀԱԿ հիմնադիր, սկզբունքները վաղուց անտեսած ՀՀ առաջին նախագահը, որն, իմ կարծիքով՝ հանգիստ եւ վերջնականապես հանգրվանեց իր սիրելի ԱԺՄԿ սիրելի առաջնորդի կողքին»: Դիմելով ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ Ռ. Թորոսյանը նշում է. «Չէի՞ր կարող՝ չպայքարեիր, այն էլ՝ պարտելով»:

Aravot.am-ը Ռ. Թորոսյանից հետաքրքրվեց՝ ինքն է՞լ է որոշել դուրս գալ ՀԱԿ-ից: Նա պատասխանեց. «Ոչ, Կոնգրեսից դուրս չեմ գալիս»: Հետաքրքրվեցինք՝ ինչպե՞ս է վերաբերվում ՀԱԿ-ից դուրս եկողներին: Պարոն Թորոսյանը պատասխանեց. «Իմ հարցի լուծման համար ՀԱԿ-ից դուրս գալը ճիշտ ճանապարհ չէ: Գուցե իրենց հարցի լուծման համար ճի՛շտ է»: Խնդրեցինք մեկնաբանել նաեւ հայտարարության այն հատվածը, որը վերաբերում էր ՀՀ առաջին նախագահին: Ռ. Թորոսյանը վրդովվեց. «Դա իրոք դավաճանություն է սկզբունքներին, մեր հասարակության ընտրական իրավունքի պաշտպանությանը, քանի որ, երբ արդյունքների ամփոփումը դեռ տեղի չի ունեցել, կա Սահմանադրական դատարան, որն ամենակարեւոր փուլն է, դու հայտարարում ես, որ ընդունում ես արդյունքները»: Մեր հարցին՝ այդ դեպքում հակասական չէ՞ պարոն Թորոսյանի՝ ՀԱԿ-ում մնալը, Aravot.am-ի զրուցակիցը պատասխանեց. «Ինչո՞ւ, մենք Լեւոն Տեր-Պետրոսյանի համա՞ր ենք ՀԱԿ-ում հավաքվել: Մենք ստորագրել ենք փաստաթուղթ, որտեղ գրված չէ, որ եկել ենք Լեւոն Տեր-Պետրոսյանի համար, այլ եկել ենք ժողովրդավարության, օրինական պետության ձեւավորման համար: Ով դավաճան է, թող նա էլ դուրս գա: Ճիշտ կլինի դնել Տեր-Պետրոսյանին ՀԱԿ-ից հեռացնելու հարցը: Դա դեռ օրակարգում չկա, բայց գուցե մենք բարձրացնենք»: Հետաքրքրվեցինք՝ ուրի՞շ ինչ ծրագրեր ունեն: Ռ. Թորոսյանը պատասխանեց. «Հեռացնել Մուկուչյանին, Ծառուկյանին չթողնել մասնակցել ընտրություններին, հեռացնել Սերժ Սարգսյանին, մաքրել Օպերայի տարածքը, Կոմիտասի այգուց հանել մի քանի գերեզման, որը որպես ավազանի պիտի անեմ»:

Պարոն Թորոսյանը սխալ է համարում այն, որ Լ. Տեր-Պետրոսյանը պաշտպանել է ԲՀԿ-ին: Սխալ է համարում նաեւ այն, որ ՀՀ առաջին նախագահը որպես գերնպատակ դրեց ոչ թե ընտրությունների, այլ քաղբանտարկյալների հարցը: Վերլուծելով այս ամենը՝ Ռ. Թորոսյանը եկել է հետեւյալ եզրահանգման. «Արդյունքում Սերժ Սարգսյանը դարձավ օրինական նախագահ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի մատուցմամբ: Առաջին նախագահն այդքան գեղեցիկ սկսեց իր վերակենդանացման գործունեությունը, բայց հետո գցեց ջուրը»:

Դառնալով ՀԱԿ-ի վարկաբեկման մասին տարածված տեսակետին՝ Ռ. Թորոսյանը նշեց. «Ինձ համար ՀԱԿ-ը վարկաբեկվեց, վերածվեց ՀՀՇ-ի, որին ժողովուրդը չի էլ ուզում տեսնել: Ցավոք, բայց այդ գեղեցիկ կազմակերպությունը մարդկանց մի խումբ նեղացրեց-նեղացրեց եւ Կոնգրեսը դարձրեց ՀՀՇ»: Մեր հարցին՝ այդքանով հանդերձ՝ ո՞րն է Ռ. Թորոսյանի՝ Կոնգրեսում մնալու նպատակը, պարոն Թորոսյանն այսպես պատասխանեց. «ՀԱԿ-ում մնում ես, որ ՀԱԿ-ը դարձնես ՀԱԿ, ինչպիսին այն կար»:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 16.05.2012

# «Հովիարային ընդդիմադիրներ»

## Սա ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարի գնահատականն է ՀՅԴ-ին, «Ժառանգությանը» եւ ՀԱԿ-ին



Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանին միշտ հուզել է այն հարցը, որ «բոլոր կուսակցություններն ընդդիմություն են խաղում»: Բայց մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների նախընտրական եւ հետընտրական շրջանում ծավալված զարգացումներն անգամ զարմացրել են ընկեր Թովմասյանին: Երեկ այդ առիթով «Առավոտի» հետ զրույցում ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարն ասաց. «Ես Արմեն Ռուստամյանին շատ եմ հավանում՝ իր հավասարակշռվածությամբ, գրագետ խոսքով, կիրթ, բայց անցյալ օրն այդ ընդդիմադիր կուսակցությունների միասնական շտաբում նա հայտարարում է, որ մանդատներն իրենք վերցնում են, որպեսզի ավելի բյուրեղանան եւ առաջ գնան: Ուրեմն իր գոյության 120-ից ավելի տարիներին ՀՅԴ-ն չի՞ բյուրեղացել, առաջ չե՞ն գնացել... Իրենց լուրջ ընդդիմադիր համարող կուսակցությունները, որոնք մի կերպ հինգ տոկոս են հաղթահարում, կորցնելով այդքան տեղեր եւ իմանալով, որ դա կեղծիքի արդյունք է՝ համաձայնում են գնալ ԱԺ: Երեք հոգով գնացիք՝ ի՞նչ պիտի անեք: Կամ՝ «Ժառանգությունը»՝ սարեր էին շարժելու, Մասիսը համարյա թե դարձել էր մերը... ախր, չի կարելի ժողովրդին խաբել: Բոլորը խաբում էին՝ օգտվելով սոցիալիստական գաղափարախոսությունից: Ասեք մարդկանց ճշմարտությունը՝ ի՞նչ եք տվել այս 22 տարում, ի՞նչ եք ստեղծել ու զարգացրել, քան Սովետական Հայաստանում էր, ավելի շատ մա՞րդ եք բերել Հայաստան, քան այն ժամանակ էին դրսից գալիս: 60-70 միլիոնով ծախսեցին քարոզարշավի վրա, ցփնեցին աջ ու ձախ, իսկ Հովհաննես Թումանյանի տունն առնելիս փող չունեին: Որովհետեւ գիտեին, որ չեն կորցնում. ինչ որ ծախսեցին՝ գոփելու են մարդկանց, մաշկահան են անելու ու ետ բերեն: Բոլորը խոստումներ շռայլեցին: Տեսնենք՝ մեկ տարի հետո դրանց քանի՞ տոկոսը կկատարեն»: Ելնելով այս իրողություններից՝ ընկեր Թովմասյանը միակ իրական եւ արմատական ընդդիմությունը համարում է Կոմկուսին: Մնացյալին համարում է «հովիարային ընդդիմադիրներ», որոնց իշխանությունները երբ ցանկանում՝ միացնում են, երբ ցանկանում՝ անջատում են:

«Առավոտի» դիտարկմանը՝ նույնիսկ առաջին նախագահի ղեկավարած դաշի՞նքը ընդդիմադիր չեք համարում, մեր զրուցակիցը հակադարձեց. «Առաջին հերթին նրանց չեմ համարում, եւ դա ցույց տվեցին իրենց իսկ հետագա քայլերը: Մի հարցազրույցում ես ՀԱԿ-ին անվանեցի «հայ ազգային կատակերգություն»: Այդպես էլ եղավ. այդ կատակերգությունն էր, որ հեղինակազրկեց մյուս ընդդիմություններին, իր վրա վերցրեց ողջ պատասխանատվությունը, իսկ այսօր բռնել է քայքայման ճանապարհը: Այդ դաշինքից ազնիվ մարդիկ, բացառությամբ առաջին նախագահի, զիջում են իրենց դիրքերը, եւ ովքե՞ր են գալիս՝ նախկին ՀՀՇ-ականները: Ի՞նչ են տալու: Ո՞նց են թոշակն 90 հազար դարձնելու, բյուջեն էլ միանգամից լցնելու: Եթե իրենց ծախածն են ետ բերելու՝ այլ հարց»: Մեր զրուցակիցը հղում անելով Կոմկուսի նախընտրական ծրագրին՝ հիշեցնում է, որ իրենք նախատեսում էին, այսպես ասած, անդրադարձ կատարել ՀՀՇ-ի իշխանության օրոք տեղի ունեցած բոլոր «ռեֆորմներին», որոնց արդյունքում մի քանի տասնյակ մարդիկ միլիոններ կուտակեցին՝ «թալանելով սովետական տարիներին ժողովրդի կուտակած հարստությունը»:

Այս ամենում Հայաստանի թիվ մեկ կոմունիստին ավելի զայրացնում է, որ՝ «Հիմա էլ բոլորը չքմեղ են դարձել, ամեն ինչ բարդում են ժողովրդի վրա՝ փողը վերցրին, ընտրեցին... Համաձայն եմ: Բա դուք ինչո՞ւ եք էդ փողով ընտրված պատգամավորը դառնում: Որ գնաք՝ էնտե՞ղ էլ ինչ-որ դերասանություն անեք: Ո՞վ է ձեզ լսելու, ո՞վ է ձեզ բանի տեղ դնելու: Ի՞նչ եղավ այս տարիների ընթացքում՝ ավազակապետությունից ջարդելով եկան, ու ամեն ինչ մնաց իր տեղում: Հիմա էլ «Համբոյի տունը կռիվ է ընկել»,- զայրացած վրա է բերում մեր զրուցակիցը՝ նկատի ունենալով այն, որ ՀԱԿ-ից հեռանում են կենսագրություն եւ վաստակ ունեցող մարդիկ:

Միաժամանակ, մեր զրուցակիցը չի արդարացնում նաեւ հասարակության այն շերտին, ովքեր ընտրություններին մասնակցեցին միայն կաշառքով. «Ի՞նչ հոգս հոգացիք այն 5-10-15 հազար դրամով, որ վերցրիք ընտրությունների օրը: Անվճար առողջապահության հա՞րց, երեխայի ուսման վա՞րձ... գոնե երկու ծաղիկ կարողացա՞ք գնել եւ այցելել հարազատների գերեզմանին: Հիմա ինչպե՞ս եք զգում ձեզ»: Այս հարցերն ուղղելով «ձայն վաճառած» ՀՀ քաղաքացիներին՝ ընկեր Թովմասյանը նաեւ նկատում է, որ իշխանությունն օգտվեց առիթից եւ իր իսկ ստեղծած պայմանների արդյունքում ստրկացած, հուսալքված ու բարոյալքված ժողովրդի հաշվին կրկին փորձեց իր համար բարիքներ քաղել. «Այս խայտառակ վիճակը ապացույցն է, որ այն համակարգը, որը շահագործում է ժողովրդին, ստրկացնում, մղում է արտագաղթի՝ երկար գոյատեւել չի կարող: Աշխարհի «լավագույն» երկրներում տեսեք, թե ինչ է կատարվում. ոչ պատերազմով, ոչ կեղծիքներով այդ համակարգն այլեւս չեն կարողանում պահել: Ժողովուրդն արթնացել է եւ իր փրկությունը տեսնում է սոցիալիստական համակարգում»:

Aravot.am-ն արդեն տեղեկացրել է, որ ՀԿԿ-ում չեն ընդունում մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները՝ վստահ լինելով, որ իրենք ավելի շատ ձայներ են հավաքել: Իսկ ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական արդյունքները ընկեր Թովմասյանն անվանում է «կեղծված թվերի հրապարակում»:

Ռուբեն Թովմասյանին խնդրեցինք նաեւ մեկնաբանել հայաստանյան քաղաքական դաշտում ստեղծված այն իրավիճակը, երբ թեեւ ՀՀԿ-ն մեծամասնություն է, այնուհանդերձ, հետագա քաղաքական զարգացումները պայմանավորված են ԲՀԿ-ի կողմնորոշմամբ: Կախված նրանից, թե որ ուժերի հետ իր ճանապարհը կշարունակի ԲՀԿ-ն, պարզ կլինի, թե ինչ հնարավոր զարգացումներ կարող են լինել: Այս առիթով ընկեր Թովմասյանը մեկնաբանություններից զերծ մնաց՝ երկու կուսակցությունների խնդիրը թողնելով իրենց: Միայն ասաց. «Յուրաքանչյուր կուսակցություն ինքն ունի իր մարտավարությունը եւ ծրագրերը: Այո, թեեւ ՀՀԿ-ն հաղթած կուսակցություն է, բայց աչքն էլի ետեւում է, որովհետեւ սրտում վախ կա, կրնկակոխ հետեւում են, իսկ առաջիկայում բավականին լուրջ քաղաքական գործունեություն պետք է ծավալեն: Ինչպես ասում են՝ «օրը կգա, բարին հետը»: Ժամանակը կգա, եւ բոլոր ստորգետնյա ջրերը դուրս կգան»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Մյասնիկ Մալխասյանը չի կիսում քաղբանտարկյալ ընկերոջ մտահոգությունը

ՀԱԿ անդամ, նախկին քաղբանտարկյալ Մյասնիկ Մալխասյանից երեկ Aravot.am-ը հետաքրքրվեց, թե նա չի՞ կիսում իր քաղբանտարկյալ ընկերոջ՝ ՀԱԿ արդեն նախկին անդամ Աշոտ Զաքարյանի մտահոգությունները՝ ԲՀԿ-ի եւ ՀԱԿ-ի համագործակցության հետ կապված: Ինչպես տեղեկացրել ենք, ՀԱԿ Գյումրիի տարածքային գրասենյակի համակարգող Աշոտ Զաքարյանը ՀԱԿ-ից դուրս գալու իր որոշումը բացատրել էր նրանով, որ երկրում ստեղծված ծանր վիճակի, ձախողումների համար ԲՀԿ-ն ՀՀԿ-ին հավասար պատասխանատվություն է կրում, եւ չի ուզում նպաստել Ռոբերտ Քոչարյանի վերադարձին:

Մյասնիկ Մալխասյանը վստահեցրեց, որ այդ առումով մտահոգություններն անտեղի են, քանի որ ՀԱԿ-ը ԲՀԿ-ի հետ համագործակցել է միայն մաքուր ընտրություններ անցկացնելու շուրջ, ընդ որում՝ պարոն Մալխասյանը կասկածում էր՝ դա համագործակցություն կարելի՞ է համարել, թե՞ ոչ: Մեր հարցին՝ հիմա արդեն ընտրությունները վերջացել են, ՀԱԿ-ը հիմա ԲՀԿ-ի հետ ոչ մի գործ չունի՞, պարոն Մալխասյանը պատասխանեց. «Ես հիմա չգիտեմ՝ ինչ զարգացումներ կլինեն, կապրենք՝ կտեսնենք: Բայց ՀԱԿ-ը «Բարգավաճի» համար իր տեսակետը հայտնել է, որ Հայաստանում, ովքեր պատրաստ են արդար ընտրություններ անցկացնելու՝ համագործակցել»: Մենք ճշտեցինք՝ այսինքն՝ հավատում եք, որ ԲՀԿ-ն անկեղծորեն արդար ընտրություններ անցկացնելու դիրքորոշում ունե՞ր, չե՞ք հավատում, որ ԲՀԿ-ն էլ է մասնակցել ընտրակաշառքներ բաժանելուն՝ նա պատասխանեց. «Հավատալ-չհավատալու խնդիրը չի, մենք պատրաստ ենք ցանկացած ուժի, մարդու հետ, ովքեր պատրաստ են Հայաստանում արդար ընտրություններին նպաստել, համախմբվել, դա չի նշանակում, որ բոլոր ոլորտներում պետք է համագործակցենք: Որտեղ անարդար կլինեն՝ կքննադատվեն, որտեղ արդար ու իրոք անկեղծ կլինեն՝ Հայաստանը տեսնելու ազատ, արդար, ժողովրդավարական երկիր՝ գուցե համագործակցենք, ինչի՞ մասին է խոսքը»:

Մեր հարցին, որ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանը խոստում էր տվել նախագահական ընտրություններին պաշտպանել Սերժ Սարգսյանի թեկնածությունը, իսկ ՀԱԿ-ը ուզում է տապալել Սերժ Սարգսյանի ստեղծած ռեժիմը, հակասություններ չե՞ք տեսնում՝ Մյասնիկ Մալխասյանը պատասխանեց. «Տարբեր բաների մասին ենք խոսում: ՀԱԿ-ը ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի հետ միասնական շտաբում միայն ազատ, արդար ընտրությունների վերահսկման շուրջ է կապված»:

Հ. ՉԵԲԵՉՅԱՆ


ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 31-Ը

ՀՀ դրամ 14%

ԱՄՆ դոլար 10%

Եվրո 8%

Իսկ եթե որոշեք ետ վերցնել ավանդի գումարն ամբողջությամբ կամ մասամբ, Ձեր տոկոսագումարի հաշվարկը կկատարվի տարեկան մինչեւ 12% դրույքաչափով:

Զարգացման Հայկական Բանկը մինչեւ մայիսի 31-ը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկում է ժամկետային ավանդի նոր տեսակ՝ խնայողական ավանդ «Մաքսիմում», 2 տարի ժամկետով, ՀՀ դրամով՝ 14%, ԱՄՆ դոլարով՝ 10%, եվրոյով՝ 8% տարեկան տոկոսադրույքով:

Զարգացման Հայկական Բանկի Հաճախորդների սպասարկման վարչության ղեկավար Աննա Անանյանը նշում է, որ բանկային համակարգում այսօր նախադեպը չունեցող այս առաջարկի գրավչությունը միայն տոկոսադրույքներում չէ: Բացի բարձր տոկոսադրույքներից, Զարգացման Հայկական Բանկի ավանդատուները, ըստ Ա. Անանյանի, պայմանագրի գործողության ողջ ընթացքում ֆինանսական դժվարություններ ունենալու դեպքում կարող են մասամբ կամ ամբողջությամբ նվազեցնել ավանդի գումարը, որի համար կստանան ավելի բարձր տոկոսագումարներ, քան նախատեսված է բանկում գործող ցպահանջ ավանդների համար: Ավանդի խզման դեպքում տոկոսագումարի վճարումն իրականացվում է հետեւյալ սկզբունքով՝

ա) եթե ավանդի գումարը նվազեցվում է պայմանագրի կնքման օրվանից 6 ամսվա ընթացքում, կամ նվազեցվող գումարը գերազանցում է ավանդի գումարի 50%-ը, ապա տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է ցպահանջ ավանդի համար նախատեսված տարեկան տոկոսադրույք գումարած 2% տարեկան,

բ) եթե ավանդի գումարի նվազեցումն իրականացվում է պայմանագրի կնքման օրվանից 6 ամիս հետո, եւ նվազեցվող գումարը չի գերազանցում ավանդի գումարի 50%-ը, ապա տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է ՀՀ դրամի դիմաց՝ 12%, ԱՄՆ դոլարի՝ 9% եւ եվրոյի՝ 7% տարեկան տոկոսադրույքներով:

Ավանդի նվազագույն գումարը կազմում է 500.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, իսկ առավելագույնը՝ 50.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:

Զարգացման Հայկական Բանկը 2011 թվականին գրանցել է հաճախորդներից ներգրավված միջոցների աննախադեպ աճ՝ 115 % կամ 11.7 մլրդ ՀՀ դրամ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդներն աճել են 2.2 անգամ, իսկ ավանդատուների քանակը՝ 2.3 անգամ:

Աննա Անանյանը բանկի ներկայիս մոտեցումները պայմանավորել է ինչպես 2011-ին արձանագրած ցուցանիշներով, այնպես էլ շուկայում նոր դիրքավորմամբ: «Մենք հատկապես կարեւորում ենք ոչ թե մեր, այլ մեր հաճախորդներին ավելի շատ եկամուտ ստանալու հնարավորություն ընձեռելը, նրանց համար առավել հարմարավետ եւ առավել շահեկան պայմաններ ստեղծելը, եւ սա քաղաքականություն է: Կարծում եմ՝ մեր մշտական հաճախորդները սրանում արդեն իսկ համոզվել են, իսկ նորերը անպայման կհամոզվեն»,- ասում է Զարգացման Հայկական Բանկի Հաճախորդների սպասարկման վարչության ղեկավարը:

ARMENIAN DEVELOPMENT BANK



«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Մանրամասների համար՝
Հեռախոս՝ 59 14 55, 59 15 15
www.armdb.com
info@armdb.com

# Կրկին ֆուտբոլային անակնկալներ Orange-ում

Orange-ի կանխավճարային բաժանորդներից մեկը կմեկնի ՈւԵՖԱ ԵՎՐՈ 2012TM-ի եզրափակիչ խաղին, իսկ ինտերնետին բաժանորդագրվողները կստանան կրկնակի ծավալ:

Այսօր Orange-ը ՈՒԵՖԱ ԵՎՐՈ 2012TM-ի գործընկերության շրջանակներում ներկայացրեց երկու նոր առաջարկ իր ձայնային եւ ինտերնետ ծառայությունների բաժանորդների համար: Այսօրվանից մինչեւ մայիսի 30-ը Orange-ի կանխավճարային ձայնային ծառայությունների այն բոլոր բաժանորդները, ովքեր կլիցքավորեն հաշիվը 500 եւ ավելի դրամով, եւ որոնց լիցքավորումը կլինի հերթական 50.000-րդը, կստանան Sony Ericsson Live with Walkman սմարթֆոն, իսկ այդ երջանիկներից նա, ում լիցքավորած գումարն այդ ժամանակահատվածի համար կլինի ամենամեծը, կստանա բոլոր ֆուտբոլասերների ամենացանկալի նվերը՝ Եվրոպայի ֆուտբոլի առաջնության եզրափակիչ խաղի ուղեգիր երկու հոգու համար:

Ֆուտբոլային տոնից կօգտվեն նաեւ ինտերնետի բաժանորդները: Բոլոր նրանք, ովքեր մինչեւ Եվրոպայի առաջնության ավարտը՝ հուլիսի 1-ը, մեկ տարով կբաժանորդագրվեն Ինտերնետ Հիմա 9000, 11000, 20000 կամ MyFi 10000, 12000, 21000 սակագնային պլաններից որեւէ մեկին կամ մեկ տարով կերկարացնեն իրենց առկա բաժանորդային պայմանագիրը, հաջորդ 12 ամիսների ընթացքում կստանան գերարագ ինտերնետի կրկնակի ծավալ:

«Եվրոպայի առաջնությանը մնացել են հաշված օրեր: Մենք գիտենք, որ այն լինելու է տարվա ֆուտբոլային իրադարձությունը, եւ հատուկ այս առաջնության համար մեկնարկող այս բազմաթիվ առաջարկների, մրցույթների միջոցով մենք աջակցում ենք բոլոր ֆուտբոլասերների սպորտային խանդավառությանը: Մենք հավատում ենք, որ բազմաթիվ գրավիչ մրցույթների, առաջարկների եւ ծառայությունների միջոցով կկարողանանք մեր բաժանորդների եւ հայ ֆուտբոլասերների համար իսկական տոն դարձնել այս՝ իսկապես մեծ ֆուտբոլային իրադարձությունը, ինչպես ողջ Եվրոպայում»,- ասաց Orange Արմենիայի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

«Արդեն կարծես սովորական է թվում, երբ Orange-ն իրականություն է դարձնում շատերի երազանքը: Այսօր այդ շարքին ավելանում է մի նոր անակնկալ. Orange-ի կանխավճարային ծառայության յուրաքանչյուր բաժանորդ կարող է հայտնվել ԵՎՐՈ 2012-ի եզրափակիչ խաղին՝ ընդամենը լիցքավորելով հաշիվը առաջիկա 2 շաբաթների ընթացքում: Իսկ ինտերնետի բաժանորդներին թերեւս այս ընթացքում շատ թրաֆիկ պետք կլինի՝ խաղերին առցանց հետեւելու համար»,- ասաց Orange Արմենիայի մարքեթինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Orange-ը հպարտ է EURO 2012TM-ը հովանավորելու համար: EURO 2012TM-ի շրջանակներում Orange Լեհաստանը հանդիսանում է EURO 2012TM-ի բացառիկ տեխնոլոգիական գործընկերը Լեհաստանում: Orange-ը ՈՒԵՖԱ-ի հետ համատեղ ներկայացնում է բջջային հեռախոսների համար նախատեսված եւ հատուկ այս առաջնության համար մշակված պաշտոնական ծրագրային հավելվածը: Սա Orange-ի կողմից երբեւիցե հովանավորված առաջին համաեվրոպական սպորտային իրադարձությունն է: Այս սպորտային նախաձեռնության բոլոր առավելություններից կօգտվեն Orange-ի բաժանորդները Հայաստանում, ինչպես Իսպանիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Միացյալ Թագավորությունում, Սլովակիայում, Ռումինիայում, Ավստրիայում, Լյուքսեմբուրգում, Մոլդովայում եւ Շվեյցարիայում:

R



# «Հաղորդակից անոթները» մեկուսացվում են



Երեւանի Էրեբունի վարչական շրջանի Գլինկայի եւ Սեւանի փողոցներով ձգվող ջրագծերը, որոնք ջուր են ստանում, համապատասխանաբար, «Մսի կոմբինատ» ՕԿՋ-ից եւ Գառնի-Երեւան ջրատարից, տարիներ առաջ միացված են եղել՝ մի տարածքից մյուսը ջուր տեղափոխելու համար: Այնուհետեւ, ճիշտ է, այդ անհրաժեշտությունը վերացել է, որի պատճառով եւ փորձ է արվել նշված միացումը ապամոնտաժել, սակայն ինչ-ինչ պատճառներով աշխատանքներն իրականացվել են մասամբ, եւ խողովակները շարունակել են գործել հաղորդակից անոթների սկզբունքով:

Ներկայումս, երբ մայրաքաղաքում լայնածավալ աշխատանքներ են ընթանում ջրամատակարարման բարելավման նպատակով, տվյալ խնդրի լուծումը, ըստ ընկերության «Արեւելք» շահագործման տնօրինության «Կենտրոն» տեղամասի գլխավոր ճարտարագետ Արթուր Զակենոյանի, հրատապ է դարձել: Գլինկայի փողոցը, ներառյալ հարակից տարածքները, ընդգրկված է շուրջօրյա ջրամատակարարման գոտում, իսկ Սեւանի փողոցն ու մերձակայքը ժամանակացույցով են սնուցվում: Բնականաբար, ջրի անկառավարելի արտահոսքը դեպի Սեւանի փողոց բացասաբար է անդրադառնում Գլինկայի փողոցի ջրամատակարարման վրա: Իր հերթին, Սեւանի փողոցում վերանորոգման աշխատանքներին խոչընդոտում է ջրի չդադարող ներհոսը Գլինկայի փողոցից: Ներկայումս ընթացող աշխատանքների շնորհիվ կլուծվեն նշված  խնդիրները, եւ կբարելավվի հետեւյալ տարածքների ջրամատակարարումը. Ս. Զորավար, Սեւան փողոցներ, Գ. Նժդեհի 33, 35 44, Արշակունյաց  39, 41, 43, 45, 47, 49 հասցեներ, Տիգրան Մեծի  40-76 հասցեներ ու նրբանցք, Բուռնազյան, Միչուրին, Բելինսկի, Սուվորով փողոցներ, Աճեմյան, Գլինկա փողոցներ ու նրբանցքներ, Արցախի 1-13 հասցեներ եւ հարակից տարածքներ:

Հաղորդակցության բաժին

# Ազատամարտիկին անտուն չթողեցին

«Առավոտի» մայիսի 12-ի՝ «Ազատամարտիկին բացիկով հա՛մ շնորհավորում են, հա՛մ տունը քանդո՞ւմ» հրապարակմամբ անդրադարձել էինք Նոր Նորքի Գյուլի Քեսյան 29 հասցեում գտնվող ազատամարտիկ Ավետիս Խաչատրյանի կիսակառույցին, որը քաղաքապետարանը հրահանգել էր քանդել: Խնդիրն այն է, որ ազատամարտիկը շինթույլտվություն չէր ստացել, բայց որպեսզի ընտանիքը չմնար դրսում, առանց համապատասխան փաստաթղթերի որոշել էր մի փոքրիկ կացարան կառուցել եւ պարբերաբար դիմել է այն սեփականացնելու խնդրանքով: Հրապարակման մեջ նաեւ նշել էինք, որ մայիսի 12-ին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը խոստացել էր ընդունել Ավետիս Խաչատրյանին եւ խնդիրը քննարկել:

Երեկ քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից «Առավոտին» վստահեցրին, որ Շուշիի ազատագրման եւ ղարաբաղյան պատերազմի 20-ամյակի կապակցությամբ Տարոն Մարգարյանը ընդունելություն է կազմակերպել բազմաթիվ ազատամարտիկների համար, որոնց թվում եղել է նաեւ Ավետիս Խաչատրյանը. «Քաղաքապետի հանձնարարականով պտօրինի շինության տարածքը ուսումնասիրվել է եւ որոշվել, որ այն հարմար է բնակելի տուն կառուցելու համար»: Ազատամարտիկի գրավոր դիմումից հետո, ըստ քաղաքապետարանի, ամեն ինչ արդեն օրինական է, եւ կառուցապատման թույլտվության գործն ընթացքի մեջ է:

Հրապարակման մեջ նաեւ գրել էինք, որ Ավետիս Խաչատրյանի մարտական ընկերները 10 օրից ավելի իրենց ընկերոջ կիսակառույցը հսկում էին, որպեսզի քաղաքապետարանի աշխատակիցներն այն չքանդեն: Ավետիս Խաչատրյանն ու նրա ընկերները՝ Երկրապահ կամավորականների միության Նոր Նորքի անդամները, Տարոն Մարգարյանին շնորհակալություն հայտնեցին ազատամարտիկին ընդառաջելու համար:

Ն. Բ.

# «ԱրմենՏել» ընկերության Կապի թանգարանը դռները բացում է

«ԱրմենՏել» ՓԲԸ (ապրանքանիշը՝ Beeline) Կապի թանգարանը, որը հիմնադրվել է 2012թ. ապրիլի վերջին, բացում է իր դռները այցելուների համար:

Կապի թանգարանը բաց է այցելությունների համար յուրաքանչյուր ուրբաթ՝ ժամը 10:00-ից մինչեւ 16:00-ը: Մուտքն անվճար է: Յուրաքանչյուր ուրբաթ 2 անգամ՝ ժամը 10:00-ից մինչեւ 12:00-ը եւ 14:00-ից մինչեւ 16:00-ը, թանգարանում անցկացվում են էքսկուրսիաներ՝ էքսկուրսավարի ուղեկցությամբ:

Էքսկուրսիաներին մասնակցելու համար պետք է մեկնարկի ժամին մոտենալ Կապի թանգարան՝ Ազատության պողոտա 24/1 հասցեում, ստանալ լրացուցիչ տվյալներ թանգարանի աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաեւ դիմել խմբակային էքսկուրսիա կազմակերպելու համար, կարելի է ուղարկել նամակ org@beeline.am էլեկտրոնային հասցեին:

«ԱրմենՏել» ընկերությունն ուրախությամբ հրավիրում է այցելել մեր թանգարան դպրոցականներին, ուսանողներին եւ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են կապի տեխնոլոգիաների զարգացմամբ: Կապի ժամանակակից տեխնոլոգիաներն այսօրվա երիտասարդության համար դարձել են սովորական, սակայն այդ ծառայության ապահովումն աշխատատար ու շատ հետաքրքիր գործ է: Պարբերաբար անցկացնելով անվճար էքսկուրսիաներ՝ մենք նպատակ ունենք ոչ միայն ներկայացնել այցելուներին, թե ինչպես է այսօր գործում կապը, այլեւ բացահայտել կապի պատմության փառավոր էջերը, պատմել մեր երկրի եւ մեր ընկերության նվաճումների մասին»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Կապի թանգարանում ներկայացված են հեռախոսային կապի եւ «ԱրմենՏել» ընկերության զարգացման պատմությանը վերաբերող նյութեր, ինչպես նաեւ երկրում ներդրված կապի ժամանակակից տեխնոլոգիաների ցուցանմուշներ: Թանգարանում ներկայացված ցուցանմուշները հնարավորություն են ընձեռում այցելուներին ծանոթանալ Հայաստանում հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման պատմությանը, ինչպես նաեւ հայ կապավորների կյանքի ուշագրավ էջերին:

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 16.05.2012

## Վճռաբեկը նախադեպային որոշում կայացրեց

ՀՀ դատական դեպարտամենտի Միջազգային համագործակցության եւ հասարակայնության հետ կապերի ծառայությունից երեկ «Առավոտին» տեղեկացրին, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012թ. ապրիլի 27-ին քննելով «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Թաթուլ Մանասերյանի՝ ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության, զրպարտությունը հերքելու եւ փոխհատուցում վճարելու պահանջների մասին, հրապարակել է նախադեպային որոշում:

«Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների հիմնական նպատակներից է օրենքների միատեսակ կիրառությունը, այսինքն՝ եթե օրենքը որոշակի ձեւով կիրառվել է մի անձի նկատմամբ, ապա հասարակության մնացած անդամները նմանատիպ գործերով կարող են դատարանից պահանջել, որպեսզի նույն օրենքն իրենց նկատմամբ էլ նույն կերպ կիրառվի: Բացի այդ, օրենքի միատեսակ կիրառման համար կարեւոր է այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի որոշումներն ավելի մատչելի լինեն հասարակության համար», նշել էր դատական դեպարտամենտը:

## Մալաթիա-Սեբաստիայի որոշ թաղամասեր կջրազրկվեն

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 16-ին, ժամը 10.00-ից մինչեւ մայիսի 17-ը, ժամը 10.00-ն կդադարեցվի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 1-2 զանգվածների, Սեբաստիա փողոցի 141, 141/1, 141/2, 141/3, 141/5 եւ 60, 62 համարների, Մեծարենց, Ծերենց փողոցների ու նրբանցքների, Շահումյանի 1-7, 14 փողոցների ու նրբանցքների, Կուրղինյան, Դ. Վարուժան, Շրջանային, Դուրյան, Վանթյան, Տիտով, Ի.Օրի, Մալաթիա, Մանուկյան, Ջիվանի, Մամիկոնյան, Բատիկյան, Միքայելյան, Ոսկանյան փողոցների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Դատարանի արգելված գոտիները











Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, համաձայնեք, ամենածանրաբեռնվածն է մնացյալ բոլոր դատարաններից: Այստեղ են հիմնականում ընթանում հնչեղ քրեական, քաղաքացիական գործերով դատական նիստերը, իսկ դատարանը պետք է յուրաքանչյուր վայրկյան պատրաստ լինի հնարավոր բոլոր վիճակներին:

Դատարանը, չնայած դատաքննական լարվածություններին, պատրաստ է պատասխանել լրատվամիջոցների հարցերին, նաեւ՝ օժանդակել նրա գործունեությանը:

Դատական կարգադրիչների աշխատանքը համակարգում է կապիտան Արթուր Փիլոյանը:

Երեկ մեր հարցին, թե որտեղ են գտնվում վկաները՝ դատական նիստերի ժամանակ, նա ցույց տվեց վկաների համար նախատեսված սպասասրահը: Այնտեղ ոչինչ չկա, բացի աթոռներից ու սեղանից, ապահոված է վկաների անվտանգությունը, ավելին՝ որեւէ մեկը չի կարող ազդել վկաների վրա մինչ նիստերի դահլիճ հասնելը:

«Առավոտին» նաեւ հետաքրքրում էր, թե որտեղ են պահվում մեղադրյալները, կալանավորվածները մինչ դահլիճ բերվելը:

Կապիտան Ա. Փիլոյանը մեզ ցույց տվեց նրանց 6 խցերը. «Ամեն առավոտ մենք ուղեկցողներին հանձնում ենք խցերը, արձանագրվում է, եւ աշխատանքային օրն ավարտվելուն պես մենք ընդունում ենք խցերը: Այնտեղ, տեսնում եք, ոչինչ չկա: Այստեղ նաեւ նկարվում է»: Ի դեպ, լուսանկարում պատկերված խցի պատկերն այսպիսին էր. զուգարան, ջուր, աթոռ եւ՝ ճաղավանդակ:

Շենքի առաջին հարկում մնացել է եւս 3 խուց, որոնք վերականգնման կարիք ունեին: Այն խոսակցությունները, թե խցերը «արտոնյալ» վիճակում են, կան կապի միջոցներ, իրականում այդպես չէր:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Մայիսի 6-ին՝ Ազգային ժողովի ընտրությունների օրը, եղել եմ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արագ արձագանքման խմբերից մեկի հետ: Այդ օրը՝ ժ.13-ին ահազանգ է ստացվել Կոտայքի մարզի թիվ 27/13 ընտրական տեղամասից, թե Ռազմական ոստիկանության մի աշխատակից բաց քվեարկություն է անում: Պաշտպանի գրասենյակի երկու իրավաբանների հետ գնացել ենք նշված տեղամաս: Սակայն նշյալ Ռազմական ոստիկանության աշխատակիցը չի եղել: ՓոխարենըDրոպեներ հետո աղմուկ է եղել, մոտեցել եմ Հրաչ անունով մի քաղաքացու, որն ասաց, թե իր անվան-ազգանվան դիմաց ստորագրել է մի այլ քաղաքացի: Հեռախոսով Զովունիից թելադրել եմ այդ լուրը եւ այն ժ.14.08-ից «Aravot.am»-ում տպագրված է: Այսինքն՝ կար ժամանակ կատարվածը ճշտելու, այդ թվում՝ միջոցներ ձեռնարկելու, ինչու չէ, կատարված միջցառումների մասին էլ լրատվամիջոցին տեղեկացնելու համար:

Ընտրություններն ավարտվել են: Ընտրություններից երկու օր հետո ինձ լուրի կապակցությամբ հեռախոսով զանգել է հանձնաժողովի նախագահ Արշակ Պետրոսյանը, որն ասել է, թե նշված թերությունը վերացվել է նույն օրը, որ քաղաքացու փոխարեն ստորագրածին կանչել են տեղամաս, «նրա տեղն» էլ իր ձայնը պահանջող քաղաքացին է ստորագրել:

Սակայն լրատվությունն ուշացած համարելով՝ մենք այդ մասին չենք տպագրել:

«Լուրեր» էլեկտրոնային կայքը «Հոդվածում մատնանշված հանգամանքները չեն համապատասխանել իրականությանը» վերնագրով մայիսի 14-ին, ժ. 19.43-ին լրատվություն էր «բաց թողել»:

# Մի նախապատրաստվող նյութի պատմություն

Տեղեկացվում է, որ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2012թ. մայիսի 6-ին՝ ժամը 10: 30-ի սահմաններում, Կոտայքի մարզի Զովունի գյուղի բնակիչ Հայկ Մինասյանը գնացել է թիվ 27/13 ընտրատեղամաս եւ մասնակցել ՀՀ ԱԺ ընտրություններին:

«Ժամը 15: 30-ին նույն ընտրատեղամաս է այցելել նաեւ Հրաչ Պողոսյանը, ով ընտրացուցակում ստորագրելու ժամանակ հայտնաբերել է, որ իր անվան դիմաց արդեն իսկ ստորագրել են: Վերջինս պարզաբանում է պահանջել հանձնաժողովի անդամներից: Ստուգման արդյունքում պարզվել է, որ ընտրացուցակներում 899-րդ հերթական համարի տակ գրանցված Հայկ Մինասյանը սխալմամբ ստորագրել է նույն ընտրացուցակի 900-րդ համարի տակ ընդգրկված Հրաչ Պողոսյանի անվան դիմաց»: Ուշադրություն դարձրեք մեր լրատվության ժամին եւ պաշտոնական ժամին:

«Ընտրատեղամաս է հրավիրվել Հայկ Մինասյանը, ով հաստատել է ընտրացուցակում Հրաչ Պողոսյանի անվան դիմաց սխալմամբ ստորագրելու հանգամանքը: Ընտրացուցակում ճշտումներ եւ այդ մասին նշումներ կատարելուց հետո Հրաչ Պողոսյանը մասնակցել է քվեարկությանը»:

Ի դեպ, 27/13 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ, ՀԱԿ-ի ներկայացուցիչ Քերոբ Դավթյանն էլ իր բացատրության մեջ նշել էր, որ թե Հայկ Մինասյանի եւ թե Հրաչ Պողոսյանի քվեարկելու ժամանակ ցուցակներում նշումներն ինքն է կատարել, տեղի ունեցածը թյուրիմացություն է, որն էլ տեղում շտկվել է:

Բացատրություններ են տվել նաեւ Հայկ Մինասյանը, 27/13 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ Արարատ Արշակյանը, նույն հանձնաժողովի նախագահ Արշակ Պետրոսյանը եւ ԲՀԿ-ի ներկայացուցիչ Հայկ Ալեքսանյանը, ով հայտնել է, որ ընտրակեղծիքներ տեղի չեն ունեցել, ինքը որեւէ լրատվամիջոցի, այդ թվում՝ նաեւ «Aravot.am» կայքին հաղորդագրություն չի տվել: Հրաչ Պողոսյանը հայտնել է, որ իր ընտրական իրավունքը չի խախտվել. «տեղի ունեցածը շփոթմունք է, որն էլ տեղում շտկվել է»:

«Aravot.am» կայքում հրապարակված «Ակնհայտես եղանք ուրիշի փոխարեն քվեարկության» վերտառությամբ հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Տեղեկացնեմ, որ թե ինձ, որպես հրապարակման հեղինակի, թե Պաշտպանի գրասենյակի երկու իրավաբաններին չեն հրավիրել ոստիկանություն, անգամ հարկ չեն համարել, պաշտոնական գրությամբ, տեղեկացնել մեզ՝ քրեական գործի նյութերը մերժելու որոշման մասին:

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

## Քրեական գործ չի հարուցվի

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնի քննիչ Հ. Պողոսյանը երեկ «Առավոտին» գրություն էր ուղարկել՝ կապված 02. 05. 2012թ. «Aravot. am» կայքում տեղադրված «Գյումրիում ընտրակաշառք բաժանում են համատարած» հոդվածի հետ:

Քննչական բաժինը տեղեկացնում է, որ նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ «Որեւէ անձի կողմից չի խոչընդոտվել որեւէ ընտրողի կամքի ազատ իրականացումը, այսինքն՝ ՀՀ ԱԺ պատգամավորների 06.05. 2012թ. կայանալիք ընտրություններին թեկնածուներից որեւէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով Գյումրիի Անի թաղամասի Սբ. Հակոբ եկեղեցու հարեւանությամբ գտնվող «Նոր Անի» համատիրությունում, դրա շրջակայքում, նշված թաղամասի նախակրթարաններում, դրանց շրջակայքերում, Բուլվարային եւ Շատրվաններ կոչվող թաղամասերում որեւէ ընտրողի կաշառք չի առաջարկվել, չի տրվել, եւ այդ նպատակով ցուցակներ չեն կազմվել»:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզի քննչական բաժինը նախապատրաստած նյութերով որոշում է կայացրել քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Ռ. Մ.

# «Աղանդավորներին ձեռնտու է կուսակցություններում մարդ ունենալը»

## Համոզված է տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը

Վերջին ելույթներում «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանը հայտնել էր, որ խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցություններից 5-ը բանակցում էր աղանդավորական կառույցների հետ: Փորձագետը նշել էր, թե բանակցողների անունները կհրապարակի խորհրդարանի կազմվելուց հետո, եւ չի բացառվում, որ ԱԺ-ում հայտնվեն աղանդավորներ: Խնդրի շուրջ «Առավոտը» զրուցեց Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր սպասավոր տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանի հետ: Հաշվի առնելով աղանդավորների ակտիվ մասնակցությունը քաղաքական կյանքին՝ քահանան նշեց, որ յուրաքանչյուր քաղաքացի, անկախ նրանից՝ աղանդավոր է, անհավատ, թե Առաքելական եկեղեցու հետեւորդ, ունի քաղաքացիական պարտք՝ որպես իր պետության անդամ մասնակցել ընտրություններին. «Ցանկացած հավատացյալ մարդ ազնիվ է, ինչը վերաբերում է նաեւ աղանդավորներին, քանի որ նրանք մոլորված, բայց, այնուամենայնիվ՝ մարդիկ են: Խնդիրն այն է, որ նրանք անմիջական եւ մեծ կախվածության մեջ են իրենց առաջնորդից: Եթե առաջնորդն ասի՝ գնացեք-ընտրեք այսինչ մարդուն, նրանք ընտրեն եւ միեւնույնը կլինի, թե ով է ընտրվողը: Այստեղ առաջնորդի եւ ընտրվողի հարաբերություններն են»:



Ինչ վերաբերում է ձայներին, ապա, տեր Շմավոնի կարծիքով, եթե աղանդավորները ԱԺ-ում որոշակի քանակություն կազմեն, ապա հնարավորություն կունենան լայնածավալ շարժվել հօգուտ իրենց «գործունեության» եւ «առաքելության»: «Գուցե օրենսդրական դաշտում չձեռնարկեն լուրջ քայլեր, բայց փոխարենը ԱԺ-ում կունենան իրենց անդամ՝ հովանավոր-պատգամավոր, եւ շատ հարցեր, ինչպես մեզանում է ընդունված, կլուծվեն մեկ զանգով: Ամեն պարագայում՝ «մեջք» կունենան: Որոշ դեպքերում իրենց կառույցում բարեկամ ունեցողը ցանկանում է դառնալ պատգամավոր, սակայն բացահայտ ցույց չի տալիս իր կապը, որպեսզի դժվարություններ չառաջանան»,- ասաց քահանան: Հոգեւորականի խոսքով՝ աղանդավորներին պարզապես ձեռնտու է ցանկացած կուսակցությունում ունենալ «իրենց» մարդը, ով, դառնալով ԱԺ պատգամավոր, ի պատասխան աղանդի անդամների եւ առաջնորդների սատարման, կփոխհատուցի վերջիններիս նախընտրած տարբերակով. «Խնդրի շուրջ պետությունը պետք է լրջորեն մտահոգվի»: Տեր Շմավոնը նշեց, որ նաեւ կուսակցություններին է ձեռնտու աղանդավորների հետ բանակցել՝ ելնելով ձայներ հավաքելու տեսանկյունից. «Այնուամենայնիվ, չեմ կարծում, որ ԱԺ-ում մեծ քանակությամբ ձայներ կունենան, որովհետեւ ժողովուրդն այդքան հիմար չէ, որ իմանալով թեկնածուի աղանդավոր լինելը՝ ձայնը տա նրան»:

Քահանան նկատել է, որ այս եւ նախորդ ընտրությունների ընթացքում թեկնածուները խուսափում էին, այսպես ասած, փնովել կամ խիստ արտահայտվել կրոնական կառույցների վերաբերյալ, որպեսզի ձայներ չկորցնեն. «Նախկին ընտրապայքարում քաղաքական գործիչներից մեկն ընտրություններից նախօրեին ասում էր, թե տարբերություն չկա այս կամ այն աղանդի եւ Առաքելական եկեղեցու հետեւորդի միջեւ եւ բոլորն էլ պաշտում են Աստծուն: Բայց երբ չընտրվեց, սկսեց բոլորին փնովել եւ ասել՝ դուք դավաճան եք»:

Տեր Շմավոնը հավելեց, որ ընտրակաշառք վերցնող քաղաքացու եւ աղանդավորի տարբերությունն այն է, որ վերջինս չունի ազատ կամք դրսեւորելու իրավունք. «Նա իր կամքը ծալել-դրել է մի կողմ եւ գործում է առաջնորդի հրամանով: Իսկ ընտրակաշառք վերցնողն ընտրում է նրան, ում ուզում է, կամ էլ ընդհանրապես չի ընտրում: Շատերն ասել են, որ հպարտանում են ընտրակաշառք վերցնելու համար, բայց չեն մտածում, որ դա հպարտանալու առիթ չի տալիս: Մեկը նույնիսկ ասաց՝ երեք կուսակցությունից էլ վերցրեցի, բայց ոչ մեկին չընտրեցի»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# «Չեմ ընդունում սմոքինգի եւ բոթասի «խառնուրդը»

## Պարուհի եւ դիզայներ Մարինա Ավետիսյանի դիտարկումները

Ժամանակին գրեթե բոլոր թատրոններն ունեին իրենց կարի արհեստանոցները, որտեղ աշխատում էին հատուկ պատրաստվածություն ունեցող դերձակներ: Բազմամարդ ստեղծագործական խմբերի համար (երգչախմբեր, նվագախմբեր) գործում էին առանձին ատելյեներ: Ժամանակի ընթացքում այդ արհեստանոցները վերացան կամ մասամբ պահպանվեցին, իսկ թատրոններն էլ սկսեցին համագործակցել հագուստի մոդելավորման դիզայներական կենտրոնների հետ, որոնք, ըստ էության, ամենեւին էլ «թատերական» չեն: Այսուհանդերձ, դիզայներական կենտրոնների եւ նման արհեստանոցների համագործակցությունը շարունակվում է:

«Առավոտը» ամենամեծ՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնից (մոտ 600 աշխատակից, որից շուրջ 350-ը՝ արտիստներ) հետաքրքրվեց, թե, օրինակ, վերջին պրեմիերաների՝ Ալ. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայի, Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ», Ռավելի «Բոլերոյի», Վիվալդիի «Տարվա եղանակներ» շարքից «Գարուն» բալետների հագուստները որտե՞ղ են ստեղծվել: Մեզ հայտնեցին, որ դրանք ծնունդ են Marina Fashion Studio-ի: Հանդիպումը վերջինիս տնօրեն Մարինա Ավետիսյանի հետ մեզ անակնկալի բերեց: Նրան հիշեցինք իբրեւ պարուհի Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլից, ավելին՝ Մարինան առաջինն էր, ով 1990-ականների սկզբներին հիմնեց «Մարինա դանս շոու» խումբը եւ «Աստաֆյան» գիշերային ակումբում, մինչ ստրիպտիզը՝ նրա հեղինակած ծրագրերով էին անցկացվում երկու ժամանոց շոուները: Մեր զրուցակիցն ասաց, որ երկու մասնագիտությունները՝ պարուհի եւ դիզայներ, ձեռք է բերել Բաքվում: Այնտեղ ավարտելով խորեոգրաֆիկ ուսումնարանը՝ ամուսնացել է, ապա ընդմիշտ կյանքը կապել հայրենիքի հետ: Իբրեւ պարուհի 20 տարի հանդես է եկել Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլում, հանդիսացել նաեւ «Հայհամերգի» մենապարուհի:



«Հեռանալով բեմից, 7 տարի առաջ հիմնեցի Marina Fashion Studio-ն՝ այսպես «օգտագործելով» երկրորդ մասնագիտությունս: Թիմս մեծ չէ. «աջ ձեռքս»՝ ձեւարար Օլգա Մարգարյանը, ութ կարող վարպետ եւ մեկ հոգի, ով զբաղվում է գլխարկների եւ տարբեր աքսեսուարների մասով: Սիրով համագործակցում եմ Ազգային օպերային թատրոնի, Սարյանի անվան օպերային ստուդիայի, Երգի-պարի եւ «Գոհար» անսամբլների, ինչպես նաեւ անհատ արվեստագետների հետ: Մեզ մոտ էսքիզները հագուստի են վերածվել նաեւ Մոսկվայի, Սոչիի, Օրենբուրգի պարային խմբերի համար»,- հայտնեց Մարինա Ավետիսյանը: Հետաքրքրվեցինք՝ թատերական նկարիչներից ո՞ւմ հետ է նախընտրում աշխատել: Դիզայները տվեց Աստղիկ Ստեփանյանի, Ռուբինա Հովհաննիսյանի եւ Արաքսի Քուշուկյանի անունները:

Դիտարկմանը, թե մեր օրերում նորաձեւության ոլորտում՝ նույնիսկ բեմում զգացվում է դասականի ու ժամանակակից ոճերի խառնուրդ, Մարինան համակարծիք լինելով՝ նշեց, թե դա անխուսափելի է, սակայն բեմը մնում է բեմ եւ անթույլատրելի է «դրսի» հագուստով ներկայանալ հանդիսատեսին: Դիզայները չի ընդունում նաեւ վերջին շրջանում դասական երգիչների ներկայանալը, ասենք, սմոքինգի եւ բոթասի «խառնուրդով»: Շարունակելով՝ հայտնեց, որ եթե երգիչը շատ է ուզում ժամանակակից երեւալ, կարող է սմոքինգի հետ ընդամենը մեկ էլեմենտով կամ աքսեսուարով «ջարդել» դասականի խիստ ոճը: Հարցրինք, թե մեր շոու-բիզնեսի ո՞ր ներկայացուցիչն է իր հագուկապով գոհացնում իրեն եւ գործող մոդելյորներից ո՞ւմ կառանձնացնի: «Կար ժամանակ, երբ հիացած էի Արմինկայի զգեստներով: Այսօր տպավորված եմ Լիլիթ Հովհաննիսյանի եւ Անահիտ Սիմոնյանի բեմական հագուստով, իսկ մոդելյորներից կառանձնացնեմ Արեւիկ Սիմոնյանին եւ դիզայներ-ոսկերիչ Նուռին»,- պատասխանեց Մարինա Ավետիսյանը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ժամանակն է զբաղվել կրթության տնտեսագիտությամբ

Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ Ներկայումս հանրապետության 10 000 բնակչին բաժին է ընկնում բուհերում սովորող 340 ուսանող, որը բավականին բարձր ցուցանիշ է ոչ միայն մեր տարածաշրջանում, այլեւ արեւմտյան կրթական շուկայում: Բայց տնտեսական առումով արդյո՞ք արդյունավետ են օգտագործվում համալսարանական ռեսուրսները՝ ես կասեի, որ ոչ: Ավելին՝ մեր բուհերի գերակշիռ մասը անգամ լուրջ ուշադրություն չի դարձնում կրթական ծառայությունների մատուցման տնտեսագիտությանը եւ հիմնականում լուծում է «ինքնագոյատեւման» եւ ոչ թե տնտեսական զարգացման խնդիրներ:

Ներկայումս հանրապետության բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը կազմում է շուրջ 8900 մարդ, այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ բուհերում սովորում է 111 000 ուսանող: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եվրոպական բուհերում մեկ դասախոսին բաժին է ընկնում շուրջ 25 ուսանող, իսկ ԱՄՆ-ի այն համալսարաններում, որտեղ մատուցվում է հեռավար ուսուցում, այդ ցուցանիշը հասնում է մինչեւ 50-ի: Կարծում եմ՝ մեր հանրապետության համար ուղղակի «տնտեսական շռայլություն» է միջին հաշվով մեկ դասախոսին 12 ուսանող հարաբերակցությունը, որը վկայում է բուհերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերհագեցածության մասին: Վիճակը առավել մտահոգիչ է պրոֆեսորադասախոսական անձնակազմ եւ վարչական աշխատողներ հարաբերակցության առումով: Հանրապետության շատ բուհեր կարծես սոցիալական, այլ ոչ թե կրթական խնդիրներ են լուծում՝ իրենց հաստիքակազմի շուրջ 25-30%-ը հատկացնելով կրթական ծառայությունները կառավարող եւ սպասարկող անձնակազմին: Արդյունքում՝ համալսարանների բյուջեի ծախսային մասի երեք քառորդից ավելին հատկացվում է միայն աշխատավարձի վճարմանը, իսկ մնացած մասն էլ հարկերին եւ այլ վերադիր ծախսերին: Բնականաբար, այս պայմաններում դժվար իրագործելի է դառնում ուսանողության շարժունության իրագործման, միջազգային բուհերում դասախոսների վերապատրաստման, նորագույն կրթական տեխնոլոգիաներով բուհերի համալրման ծրագրերի ֆինանսավորումը:

Ի դեպ, հարկերի մասին: Արդեն մի քանի տարի է, որ հանրապետության պետական բուհերը ընդգրկվում են խոշոր հարկատուների ցանկում եւ հայտնվում են զանազան «գրուպների եւ հոլդինգների» կողքին: Այս փաստը վկայում է բարձրագույն կրթության ծառայությունների մատուցման նկատմամբ ոչ արդյունավետ հարկային քաղաքականության մասին, քանզի կարծում եմ, որ պետական ոչ առեւտրային կազմակերպություն հանդիսացող բուհերը, որոնք շահույթ չեն հետապնդում եւ չեն զբաղվում գործարարությամբ, պետք է հնարավորինս թեթեւացնեն իրենց հարկային բեռը եւ խնայված հարկային միջոցները վերաուղղեն կրթական ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը:

Կրթական ծախսերի արդյունավետության բարձրացման ուղի է հանդիսանում նաեւ օպտիմալացման գործընթացը, որի մասին շատ է խոսվում, բայց դեռեւս արդյունքը չի երեւում: Միջազգային կրթական շուկայում ակնառու է օպտիմալացման գործընթացը, երբ համալսարանները տարբեր սկզբունքներով միավորվելով, բացառում են միմյանց կրկնող ամբիոնները, մասնագիտությունները, ներբուհական կառավարման ստորաբաժանումները, դրանով իսկ տրամադրելով միացյալ ավարտական դիպլոմներ, խնայելով հսկայական վերադիր ծախսեր, հեշտացնելով ուսանողների շարժունությունը եւ ակադեմիական կրեդիտների փոխանակումը, եւ ի վերջո՝ բարձրացնելով կրթական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

Ժամանակն է, որ մեր բուհերը լրջորեն զբաղվեն կրթության տնտեսագիտությամբ:

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

VIVACELL MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Անդրանիկ Կարապետյանը փորձել է աշխարհի ռեկորդ սահմանել



Գվատեմալայում ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Հայաստանի առաջին մասնակիցը՝ 69 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը, երկամարտի 396 կգ արդյունքով գրավեց 10-րդ հորիզոնականը:

«Aravot..am»-ն արդեն տեղեկացրել է, որ Անդրանիկը երկու վարժություններում ընձեռված երեքական հնարավորություններից ընդամենը մեկական արդյունավետ մոտեցում է կատարել՝ պոկումում ցույց տալով 136 կգ, հրումում՝ 160 կգ:

Անկեղծ ասած, Անդրանիկ Կարապետյանից մենք ավելին էինք սպասում: Խնդրո առարկայի շուրջ «Առավոտը» զրուցեց հանրապետության ծանրամարտի Ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանի հետ:

- Պարոն Խաչատրյան: Պատանի հայ ծանրորդի գրաված 10-րդ տեղը գոհացնո՞ւմ է ձեզ:

- Եվ այո, եւ՝ ոչ: Այո, որովհետեւ նա առաջին անգամ էր հանդես գալիս այդ քաշային կարգում, այն էլ՝ աշխարհի երիտասարդական առաջնությունում: Մի մոռացեք, որ տղան ընդամենը 16 տարեկան է: Անդրանիկը Գվատեմալայում փորձել է թարմացնել պոկում վարժության աշխարհի պատանիների ռեկորդը՝ 143 կգ, որը չի ստացվել: Դժգոհ եմ այն բանի համար, որ Անդրանիկն այստեղ մարզումների ժամանակ բարձրացնում էր 136+ 160 կիլոգրամ: Այնպես որ, եթե նա իր պատվիրած բոլոր քաշերը բարձրացներ, տեղ կզբաղեցներ պատվո պատվանդանի երկրորդ աստիճանին: Կրկնում եմ, այն էլ իրենից մեկ աստիճան բարձր տարիքային խմբի մրցակիցների հետ պայքարում:

- Եթե կարողանար: Բայց չստացվեց...

- Անդրանիկն իսկապես տաղանդավոր եւ բնությունից օժտված ծանրորդ է: Իրականում նա չի ձախողվել եւ արել է այն, ինչի ընդունակ էր: Մի մոռացեք նաեւ, որ պատանեկան տարիքում առաջին անգամ երիտասարդների աշխարհի առաջնությանը մասնակցելը հոգեբանական մեծ ծանրաբեռնվածություն է: Բայց այս տարի, կարծում եմ, նա դեռ կիասցնի իր խոսքն ասել:

- Էլի՞ մրցումների պետք է մասնակցի:

- Օգոստոսին՝ Ռումինիայում Եվրոպայի, իսկ մեկ ամիս անց Սլովակիայում՝ աշխարհի պատանիների առաջնություններն են, որոնց նա մասնակցելու է նույն քաշային կարգում: Սպասենք:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. Գ. Գվատեմալայում մեր երկրորդ մասնակիցը՝ գերծանր քաշային Գոռ Մինասյանը, մրցահարթակ մտնելու է մայիսի 18-ին:

## Վեց բռնցքամարտիկ մեկնել է Մինսկ



Այսօր Բելառուսի մայրաքաղաքում մեկնարկում է սիրողական բռնցքամարտի միջազգային խոշոր մրցաշար, որին ավանդաբար մասնակցում են տարբեր երկրների հեղինակավոր մարզիկներ: Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանը մեր հանրապետության վեց ներկայացուցիչների հետ նույնպես արդեն մրցավայրում է: Մինսկի ռինգում հանդես են գալու երեւանցիներ Կորյուն Սողոմոնյանը՝ 52 կգ քաշային կարգ, Հրանտ Սարգսյանը՝ 56 կգ, Արթուր Քիրաջյանը՝ 64 կգ, Վլադիմիր Մարգարյանը՝ 69 կգ, գյումրեցի՝ 60 կգ քաշային Հովհաննես Բաչկովը եւ Լոնդոնի օլիմպիական խաղերի մասնակից մեր միակ բռնցքամարտիկ՝ 75 կգ քաշային Անդրանիկ Հակոբյանը (Էջմիածին): Մրցաշարի հաղթողները հայտնի են դառնալու մայիսի 20-ին:

### Արժանի գնահատում

ՀԱՕԿ-ի լրատվական ծառայությունը տեղեկացնում է, որ ընդամենը երեք տարվա կենսագրություն ունեցող Հայաստանի հակադոպինգային կազմակերպությունը երկրորդ տարին անընդմեջ ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Սպորտում դոպինգի դեմ պայքարի» մրցույթի հաղթող: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրամն այս անգամ շուրջ $20 հազար է հատկացրել Հայաստանի հակադոպինգային կազմակերպությանը: Ծառայության պետ, կենսաբանական գիտությունների դոկտոր Արեգ Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ այդ գումարը տրամադրվելու է կազմակերպության աշխատանքների կատարելագործմանը, համապատասխան փաստաթղթերի ստեղծմանը, Հայաստանի հակադոպինգային կազմակերպության հեղինակության բարձրացմանը եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: Իսկ գլխավոր նպատակը «ISO 9001» կարգի հավաստագիր ստանալն է: Մինչեւ այժմ աշխարհում միջազգային այդ հավաստագրին արժանացել է ընդամենը 20 երկիր: Արեգ Հովհաննիսյանը հատուկ նշել է նաեւ, որ իրենց աշխատանքների հաջողության, ծրագրերի իրականացման գործում չափազանց մեծ է ՀԱՕԿ-ի աջակցությունը:

Ա. Հ.

## ԱՆԴՐԱԴԱՐՁ

### DIY ակումբը պայթեցնողներն ազատ են արձակվել



Երեւանի կենտրոնում գտնվող DIY ակումբի պայթեցման գործը լսվում է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Ինչպես Aravot.am-ին հայտնեց ակումբի պայթեցման մեջ մեղադրվողներ Մկրտիչ եւ Համբիկ Խաբազյանների փաստաբան Մելանյա Առուստամյանը, Մկրտիչ Խաբազյանին բաց են թողել 1 մլն գրավի դիմաց, իսկ Համբիկ Խաբազյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությամբ հանրապետությունից չհեռանալու պայմանը: «ՀՀ Քրեական օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի առաջին կետով ուրիշի գույքին դիտավորությամբ վնաս հասցնելու համար սահմանվում է 2-6 տարվա ազատազրկում: Գործի առիթով այժմ կատարվում է նախաքննություն»,- հավելեց տիկին Առուստամյանը:

Հիշեցնենք, որ մայիսի 8-ի գիշերը մի խումբ երիտասարդներ կոտրել էին DIY ակումբի դուռը եւ ներս նետել պայթուցիկ, ինչի հետեւանքով այրվել էր ակումբի գույքի մի մասը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# Վիեննայի սիմֆոնիկը հիացած էր հայ պատանիով

Մայիսի 4-12-ը Վիեննայում կայացավ դասական երաժշտության պատանի երաժիշտների «Եվրատեսիլ-2012» մրցույթը, որին Հայաստանը մասնակցեց առաջին անգամ՝ ՀՀ մշակույթի նախարարության եւ Հանրային հեռուստատեսության աջակցությամբ: Մրցույթին մասնակցում էին դասական ժանրում հանդես եկող 15-19 տարեկան երաժիշտներ: Հայաստանը ներկայացնող 15-ամյա տաղանդաշատ պատանի Նարեկ Կազազյանը զբաղեցրեց 3-րդ տեղը, իսկ երկրորդ տեղը գրավեց կրկին հայ՝ Ավստրիան ներկայացնող ջութակահար Էմանուել Ճգնավորյանը:



Երեկ մշակույթի նախարարությունում կայացած ասուլիսի ժամանակ նախարարի տեղակալ Արթուր Պողոսյանը նշեց, որ Նարեկի հաղթանակը մեծ կարեւորություն ունի մեզ համար, հատկապես, երբ առաջին անգամ ենք մասնակցում մրցույթին: «Ուշադրությամբ հետեւել ենք նրա բոլոր ելույթներին, նրա հաղթանակը մեր մանկավարժների հաջողությունն է եւ թույլ է տալիս ամրագրել մեր հետագա անելիքները: Նախարարությունն ուշադրություն է դարձնելու տաղանդաշատ պատանիների հետագա դրսեւորմանը: 2012-15 թվականները հայտարարված են պատանի կատարողներին օժանդակելու տարիներ»,- ասաց փոխնախարարը եւ հավելեց, որ Էմանուելին նույնպես կրթել են մեր ուսուցիչները:

Նարեկ Կազազյանը նշեց, որ իր համար հատկապես մեծ պատիվ էր հանդես գալ Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի հետ: «3-րդ տեղը զբաղեցնելն էլ ինձ համար հաղթանակ է, քանի որ 14 մասնակից երկիր կար: Մթնոլորտը լարված չէր, ընկերություն էի անում բոլորի, հատկապես՝ Էմանուելի հետ: Ավելի շատ անհանգստանում էի կիսաեզրափակչում նվագելուց, բայց երբ տեսնում էի, որ ուսուցիչս՝ Անահիտ Հովսեփյանը, հանգիստ է, ես էլ էի հանգստանում»,- ասաց մրցանակակիրը: Անահիտ Հովսեփյանն էլ նշեց, որ արդյունքի հասնելու հարցում իրենց օգնել է թիմային աշխատանքը. «Երբ քո սիրած գործով ես զբաղվում, կապ չունի, թե հանդիսատեսն ով է»:

«Եվրատեսիլի» պատվիրակության ղեկավար Գոհար Գասպարյանը նշեց, որ Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտները հիացած էին Նարեկի ելույթներով. «Յուրաքանչյուրը հետո մոտենում էր նրան ու ասում, որ իրենց համար հենց Նարեկն է հաղթողը: Մրցույթը երկու տարին մեկ է անցկացվում եւ իր մասշտաբով զիջում է մանկական եւ մեծերի «Եվրատեսիլին», բայց ավելի լավ է ուշ-ուշ մասնակցել, բայց գրանցել հաջողություն»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# «Եթե այսպես շարունակվի՝ մեր պետությունը կկործանվի»

Երեկ «Հայելի» ակումբում ճանաչված դերասան Ազատ Գասպարյանը եւ անվանի նկարիչ Հաղթանակ Շահումյանը խոսեցին հետընտրական կրքերից: Ազատ Գասպարյանն ասաց, որ ընդհանուր առմամբ գոհ է ԱԺ ընտրությունների արդյունքներից: Ըստ նրա՝ մենք անմիաբան ժողովուրդ ենք, իսկ կուսակցություններն է՛լ ավելի են մասնատում մեզ: Չնայած այս ամենին, բանախոսն ուրախ է, որ չեղան ծեծկռտուքներ:

«Ինչպե՞ս անենք, որ կանխվի արտագաղթը ու սկսվի ներգաղթը: Այ, այս հարցը պետք է մեզ հետաքրքրի, ոչ թե՝ այս նախարարությունը իմն է, այն նախարարը իմն է: Լինում եմ շատ գյուղերում, համարյա մարդ չի մնացել: Եթե ամեն մարզում կառուցվի գոնե մեկ գործարան, ապա կսկսվի ներգաղթ»,- վստահ է դերասանը: Պարոն Գասպարյանի կարծիքով՝ այս խնդիրը ի զորու է լուծել միայն կառավարող կուսակցությունը:

Գեղանկարիչ Հաղթանակ Շահումյանը համաձայն է Ազատ Գասպարյանի այն կարծիքին, որ ընտրությունները, անցյալ տարիների համեմատ, հանգիստ անցան. «Զարմանալի է, որ դա մենք սարքել ենք գնահատական: Կարծես թե վայրի ցեղ ենք, ու որ նման բան չի լինում, լավ ենք զգում մեզ»:

Շահումյանը դրական է համարում նոր ուժերի՝ ԱԺ անցնելը: Բանախոսի կարծիքով՝ նրանք ի վիճակի են ինչ-որ բաներ փոխելու: Նկարիչն ունի մեկ ցանկություն՝ իշխող կուսակցության՝ «Հավատանք, որ փոխենք» կարգախոսը իրականանա: Ազատ Գասպարյանն էլ հավատացած է, որ պարոն Շահումյանի ցանկությունը կկատարի ՀՀԿ-ն, եթե համախմբի իր ուժերը: «Եթե կարգախոսում նրանք ասում են փոխելու մասին, ուրեմն զգում են, չէ՞, որ կա փոփոխման կարիք»,- ասում է Հաղթանակ Շահումյանը: Իր խոսքով՝ ապրում ենք մի երկրում, որտեղ ամեն ինչ պարզ երեւում է, ու եթե շարունակվի այսպես՝ մեր պետությունը կկործանվի:

ԱՐԱՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ